

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարադարձագրի գրում են ուղղակի
Тифлис. Редакция „Мелк“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10-2 ժամ
(Բացի կիրակի և ասոն օրերից):

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱՎՈՐՈՒՄ

Մեր անտոյութիւնների պատճառով: Ներքին
տեսուչի խումբը: Նամակ Եւրոպայի
շուք: Ներքին լուրեր: Արտաքին տեսուչի
թիւն: Անգլիա: Թիւրքիա: Արեւելեան գործեր:
— Մշակութային հետազոտութիւններ:—
Բանասիրական: Աւետարանական հայերին:

ՄԵՐ ԱՆԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ

Երբ որ մարդը մի թէև ան-
ցաւոր հայեացք է գցում մեր
հասարակական գործիչների վրա,
ակամայ համոզվում է որ այդ
գործիչներից գրեթէ ոչ միւր իր
բուն կոչմանը չէ հետևում, կամ ա-
ւել լաւ է ասել երբեք ոչինչ
կոչում ունեցած չը լինելով, ձեռ-
նամուխ է լինում անխտիր հա-
սարակական ամեն տեսակ պա-
րապմունքներին և պաշտօննե-
րին: Մարդ որ երբեք մանկա-
վարժութիւն չէ ուսել,— նա ու-

սուցիչ կամ տեսուչ է. մարդ, որ
աստուածաբանութիւն երբեք չէ
սովորել,— նա քահանայ, աբեղայ,
կամ եպիսկոպոս է. մարդ, որ
քաղաքական և հասարակական
գիտութիւններ չէ ստուգնաւի-
րել,— նա քաղաքական թերթի
խմբագիր է. մարդ որ իրաւա-
բանութիւն չէ սովորել, այլ
գուցէ բնական կամ ուրիշ գի-
տութիւններ,— նա փաստաբան
է. մարդ որ երբեք ֆինանսա-
կան գիտութիւն չէ ուսել,— նա
բանկիր է, և այլն:

Եւրոպայի բնական չէ. մե-
զանում իւրաքանչիւր անհատ
իրան իրաւունք է համարում
զբաղվել միաժամանակ հազար
ու մի, կատարելապէս միմեան-
ցից տարբեր գործերով:

Մեզանում գրեթէ ոչ ոք չէ
պատրաստվում յատկապէս այս

կամ այն հասարակական գոր-
ծունէութեան, պարապմունքի
համար: Բոլորն էլ հոմոգլոս են
թէ իրանք ամեն բանին ընդու-
նակ են, առանց որ և է պաշ-
տօնին, պարապմունքին նախա-
պէս, տարիների ընթացքում
պատրաստվելու, առանց մասնա-
գէտ դասնալու: Բոլորն, սո-
վորութիւնը գեռ քաւական չէ,
պէտք է գիտնական կամ տեխ-
նիկական, յայտնի ուսումնական
գիտցի պլին այի վրա նախա-
պատրաստվելու:

Եւ մենք այնքան սովոր ենք
այդ մտքին, որ ամեն մարդ ա-
մեն բանին ընդունակ կարող է
լինել, առանց այն առարկայ սո-
վորած լինելու, որին նա իրան
նուիրում է, առանց փոքր ի շա-
տէ պատրաստվելու այն պաշ-
տօնին, այն պարապմունքին որ

նա համարձակ յանձն է առնում,
որ, օրինակ, մեր այլ և այլ ընտ-
րութիւնների ժամանակն էլ մենք
այդպէս ենք վերաբերվում դէպի
անձնաւորութիւնները: Դեռ ևս
մի պարապմունքից դէպի մի
ազգակից պարապմունք անցնելը
բաւական դժուար է,— բայց դա
այնու ամենայնիւ հնարաւոր է:
Քիմիա տեսականապէս ուսումնա-
սիրած մարդը կարող է, օրինակ,
քիչ շատ աշխատասէր լինելով,
տեխնիկական քիմիային անցնել,
մի գործարանի կառավարիչ դառ-
նալ. պուրլիցիստը, որ ուսումնա-
սիրել է քաղաքական, հասարա-
կական և տնտեսական գիտու-
թիւնները, կարող է դիպլոմա-
տիական ասպարէզը մտնել. ներ-
քին հիւանդութիւնների մէջ
մասնագէտ բժիշկը կարող է կա-
տարելադարձվելով մանկաբարձ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԻՆ

Բ. ՆԱՄՍԿ

Ցանկալի եղբարք, առաջին նամակում ես փոքր
ի շատէ բացատրեցի ձեզ մեր աւետարանական
հայերիս դադափարը ազգութեան մասին, թէ ինչ-
պէս պէտք է մեզ սիրել մեր արիւնակիցներին, և
թէ ինչպէս մեր պարտականութիւնն է մշակել և
աղնւադրել այն ազգային յատկանիշ առանձնու-
թիւնները, որ Արարիչը մեզ ստեղծելիս բարեհա-
ձել է մեզ աւանդել, և իրենց որ դորանցից ամե-
նանշանաւորը մեր հայրենի լեզուն է Նախընթաց
նամակում բացատրեալ մտքերին և խնդրելն փա-
փաքում եմ այսօր մի քանի մտքեր ու խնդիրք է
յարել, իմանալով որ ձեր յօժարամիտ դատողու-
թեան առաջին ընդունելութեան կարծանաւոր:

Պատմութեան տեղեակ անձանց համար դա մի
անտարբեր ու անհետքի է ճշմարտութիւն է, որ
աւետարանականութիւնը հիմնեց Լուսինի Աս-
տուածաշնչի թարգմանութեամբ գերմանացոց ար-
դի ճոխ գրականութիւնը. աւետարանական քարո-
զիչներն են որ այսօր սուրբ գիրքը 226 լեզուի
թարգմանելով գրականութեան նշոյնն ու դադա-
փայն անգամ չունեցող վայրերն և կիսավայրերի
ցեղերի մէջ տարեր, գրքեր, գրականութիւն ու
դպրութիւն են ստեղծել: Սա ևս անուանալի իրո-
ղութիւնն է շատ ցաւուն և ախտաւոր եմ որ մեր
յարգի Ա. Նիքեանի հնախաղութեան մէջ փորձ
ու սրտաւ անջրջել փրկել է այդ խոշոր իրողու-
թիւնը, որ ոչ թէ միայն Տաճկաստանի մէջ աշ-
խարհաբար լեզուի հիմնադիրներն ու մշակողները
աւետարանական քարոզիչներն էին, այլ նոյն իսկ
մեր արարատեան աշխարհաբար գաւառական
խոփակաւորութիւնից մեր ճանող, կոկող մշակողնե-
րը դարձեալ մի և նոյն աւետարանական բայց
մեր այսօրվայ մի քանի ապերաւոտ ուսումնական-
ներից արհամարհված քարոզիչներն էին, որոնք
20-ական թիւերն մեր Կովկասի հայերէն բար-
բառներից Նրեանեանը իրեն ընտրին ու ընդունա-
կաբար ջոկեցին և նրանով գրքեր տպեցին Տու-
շում և Աւետարանն ու Սաղմոսը թարգմանեցին

ու Մոսկվայում տպել տուին, մինչդեռ մեր կով-
կասցի հայերի այն ժամանակի գիտական համար-
ված պարագլուխները «Կապիստ» լրագրի հրա-
տարարութեան մէջ անտոյ տատանվում էին այս
և այն կողմ, թէ արդեօք դրաբար գրեն թէ մի
տեսակ դրաբարանման պլանդակ աշխարհաբար:
Եւ Տաճկաստանում, ու նոյն իսկ Կ. Պոլսում, զէնց
ի աւետարանականութիւնը սկսվեց, առաջի նուա-
զում աւետարանական հայերն էին, որոնք թեւա-
կիսեցին մաքուր հայերէն խօսել առանց տաճկե-
րէն բառեր ու ոճեր շփոթելու, այնպէս որ միւս
լուսաւորչականները քանի տարի շարունակ աւե-
տարան կան հայերին «բայց». «ուսկաւեն», «ան-
շուշտ» «մանաւանդ» մականուններն էին տալիս,
որովհետեւ նրանք սովորական տաճկերէն «ամա-
նալ» էին և այլն բառերի տեղ մաքուր հայերէն
էին գործածում, որ միմեանքին խորթ էր երևում,
բայց որոնք հիմա Կ. Պոլսում և Տաճկաստանում
ընդհանրացել են և ընդհանրանում են: Եւ դար-
ձեալ վերկենալ մեզ մեղադրել թէ աւետարանա-
կանները անջոգ են ազգային նուիրական աւանդ-
ների և առանձնութեանց նկատմամբ, չեմ իմա-
նում ինչ բանի վերքնայեմ:

Նա ան իրողութիւնները ձեզ հաղորդում եմ,
սիրելի եղբարք, որ նիւթ ունենալ, համաստե-
թեամբ պատասխանելու մեզ դուր տեղը դատա-
պարտողներին: Դա էլ անհիմն զրպարտութիւն է,
ասել թէ աւետարանական քարոզիչները Տաճկաս-
տանում ձգտում են հայերէնը փոխալինել տաճկե-
րէնով: Նախ և առաջ որ սա մի անհիմն թէ ան-
հիմն ջանք կը լինէր, որովհետեւ հայերէն լեզուն
արդէն այնպիսի արմատներ է գցել, որ անխորելի
է նրան խելք և երկրորդը որ բանը թիւր են մեղ-
նում: Նա բնաւ դիտարարութիւն չունեմ Տաճկաս-
տանում գործող ամերիկացի միտիոնարաց գործ-
ողութիւնը ըստ ամենայնի պաշտպանելու. ես խոս-
տանում եմ մինչ, անգամ իմ նամակների մէկումը
ձեզ համար պարզել նոյնք էլ մի քանի թերու-
թիւններ և վնասակար կողմերը: Բայց հիմա ասում
եմ, որ այդ ամբաստանութիւնը, թէ նրանք իբրեւ
թէ ուղղում են Տաճկաստանում հայերէնը անհի-
մանով, չհիմնով անտոյգ է: Նորանք ճշմարտ
է՝ շատ գրքեր են տպում հայերէն տառերով, բայց
լեզուն տաճկերէն. մինչև անգամ այս յետին ժա-
մանակներում Աստուածաշունչն էլ, որի տաճկերէն

թարգմանութիւնը վերաբնեցին, տպել են հայերէն
տառերով տաճկի լեզուով: Բայց միթէ դորանից
հետեւում է, թէ նրանք ուղղում են տաճկաբան
հայերին տ ճիւղին խօսել տալ, ինչպէս որ ոմանք
Չանք արին բանը թիւրքի չէ որ Կ. Պոլսի հայոց
առաջին օրական լրագիրը «Մ նշուակի ինքեար»
այս տարի ամսօրեայ դարձաւ «Մարիա»,
կեսաւորի Կ. Փանոսեան Ֆիլիքի տնօրինութեամբ
տաճկերէն է հրատարակվում: Եւ կայ ու կը դը-
տնվի Կ. Պոլսում մէկ հատ հայ, որ «Մանուկ»
տաճկախօս լեզուիցը զայլմակղվելով, նրան հա-
կազային շարժառիթներ վերադրել. մէկ հատը
չը կայ: Ապա ի՞նչ է պատճառը որ մի և նոյն բա-
նը, որ աւետարանական քարոզիչն է անում, ապա-
գովներ է արժանանում, սորա պատասխանը ձեզ
եմ թողնում: Տակաստանում կան իրաւ է գլխա-
ւորապէս երկու մեծ հայաբնակ նահանգներ, որոնց
բնակիչները մին մի խօսք չը գիտեն հայերէն. դա
Կեսաւորի և Բուսաս է: Մեր բժանիղի բնիչ-
ները համաձայնում ու յօժարվում են որ բոլորացի
ու կեսաւորացի հայերը բոլոր ս. գիրքը կարդան
տաճկերէն, իմանան տաճկերէն, խօսեն և մտածեն
տաճկերէն, բայց նրանք վրդովվում են միայն նը-
րանից, որ նրանք հիմա այլ ևս Յակոբ, Յովսէփ
Նոյ, Աբրահամ և այլն չեն ասելու, այլ Նազուր,
Նուսրէ, Նուհ, Իբրահիմ և այլն: Դէ սա հիմա կա-
տարելապէս «ուղտերը կուլ տալ և մեղքները քա-
մել» ասել է, ուրիշ ոչինչ:

Սակայն բայց ի դմանէ աւետարանական հայե-
րին և բանիւրուն լուսաւորչ կաններին վաղուց
արդէն ծանօթ է այն միջիմարական հանգամանքը,
թէ հայերէն տառերով ու տաճկերէն լեզուով գր-
քեր ու լրագրեր տպել հրատարակելը ոչ թէ միայն
ոչինչ ֆիսա չունի հայ լեզուի և հայ ազգութեան
համար, այլ ընդհակառակը դա մեծամեծ օգուտ-
ներ է բերելու իրան ժամանակին: Եւ քանչիւր
բանիմացի համար այլ ևս զաղտնիք չէ, որ տաճ-
կաց պատմութիւնը իր լեզուով և իր արաբական
պատմութեան բնով վրա, որ արդէն իր դերը
լիովին խաղացել է և անխելադառնալի կերպով
պիտի ջնջվի: Այսօր հայը և հայերէնն է երևում
մեզ և բոլոր միացեալ լուսաւոր Ներսիսային այդ
չորացած արմատից բողբոջող դալար շառաւիղը:
Հիմա թողքերը հայերէն տառերով գրուածքները

կարգաւոր, կրնտեղանան մեր տառերի հետ, վաղը
կուզեն հայերէն լեզուով գրքեր կարգաւ փոքր առ
փոքր էլ խօսել, մանաւանդ եթէ մենք մի քանի
րոցները բանանք նորանց համար և ինքներս սի-
լով ու անձնուրացաբար նպաստենք ու ծառայենք
նորանց այդ պատմական կերպարանափոխութեան
ճշմարտում (ՌԵՅԵՐ), նորանք շուտով կը զգան
ու կը հասկանան որ մեզ հետ համարին և հա-
մարեղ եղբայրներ են, այլ միայն Բուդայի, Թա-
մարէն և ուրիշ այդ տեսակ հրէշների բռնաշա-
րութեամբը աւանդ որ և է գիտակցութեան և
համոզման, ինչպէս մեր պատմագիր Յովհաննէս
Կաթողիկոսը տճ արած միշտ կրկնում է, «չե-
ղաւք են յանթէն օրէնս Մահմադի»: Ուրեմն այդ
բանում էլ կայ օգուտ մեզ համար, ու միայն ան-
հափազան և կարճատես մանուկները կարող են
այդ տեսակ երեւոյթով վրդովվել, ինչպէս որ ե-
րեսայք, որոնք երկրպագործութեան վրա դադափար
չունեն, կը վրդովվեն եթէ տեսնեն որ մարդիկ
գետինը հիւրկում և մաքուր ցորենը ցրել են տալիս
նորա վրա:

Այս միտքը և իրողութիւնը ձեզ համար, սիրելի
եղբարք, բացատրելուց յետոյ խնդրեմ սա է, որ
ոչ թէ միայն աշխատե՞ք ձեր տնտեսումն ու հրա-
պարակներումը պարզ ու յստակ հայերէն խօսելու,
ինչպէս որ առաջին նամակում յիշել և խնդը-
րել եմ, խոյս տալով ամեն օտար և մանա-
ւանդ թուրքերէն բառերից և ոճերից, այլ գուն
գործեցէ՛ք որ՝ կարելի եղածին չափ՝ մերժէ՛ք նաև
նոյն իսկ կոշտ ու գունդիկ հայերէն խօսքերը: Վեր-
ջապէս ձեր ուշադրութիւնը դարձնում եմ և մի
հանգամանքի, որը թէև ըստ երևոյթին մի հնչյն
բան է թւում, բայց ունի իր մեծ կաւորութիւնը:
Մեր լեզուն հիմնապէս քննողները մեզ ապում են,
որ հայերէն լեզուին անմասօթ են արաբական կո-
կորդային ձայները: Հայր Արտէն և մեր լե-
զուն միւս հետազոտողները գտել են, որ մենք խ,
դ, ու, չ, ք, է, ձայները շատ կոշտ ենք հնչում մազ-
մատական լեզուների աղղեցութեամբը աղաւաղ-
վելով: Ուրեմն աշխատենք գտնել մեր արդի կարո-
ղութեան չափ հիտեւել քաղցրահնչական արտասա-
նութեան այդ յիշեալ տառերը մեզմ և կախող
հնչւով:

Նկեղծ սիրով և յարգանքով ձեր
Աբր. Ամիրխանեանց

կամ խիստորդ զառնալ, վերջապէս ընդունում ենք, որ ընդհանրապէս զարգացած, ընդհանուր կրթութիւն ստացած մարդը կարող է գարոցի կառավարիչ դառնալ, որովհետեւ ամեն մի ճշմարիտ կրթված մարդ կարող է և պէտք է իր երեխաների ամենալաւ դաստիարակ դառնալ...

Բայց թէ մարդը յանկարծակի, առանց որ և է պատրաստութեան կարողանայ անցնել մի պարագմունքից գէպի մի ուրիշը, որ ոչինչ կապ ոչինչ ազդեցութիւն չունի առաջինի հետ, այդ մենք չենք ընդունում:

Իսկ մեզանում, ամեն ճիշդի մէջ ճշմարիտ մասնագէտների բացակայութեան պատճառով մարդը շատ բնական է գտնում, երբ արուեստաւոր գինեգործը դառնում է գարոցի տեսուչ, երբ գեղագործեան վարժապետը դառնում է բանկի գիրեկտօր, երբ բժիշկը կամ երկրագործը դառնում են քաղաքագլուխ, երբ զինուորականը դառնում է երաժշտական ընկերութեան նախագահ, և այլն: Մենք աւելի կասենք. մեզանում այդ ոչ թէ միայն բնական է երեւում, բայց գրեթէ ուրիշ էլք էլ չունենք, որովհետեւ չունենք գրեթէ ոչ մի ճիշդի մէջ պատրաստված, փորձված մասնագէտներ: Մենք սրտիպված ենք հաշտվել այն մտքի հետ որ մեր հասարակութեան մէջ գործիչների մեծ մասը ընդունում են այնպիսի պարագմունքներ, որոնց համար ոչինչ կոչում, պատրաստութիւն չունեն: Եւ այսպիսով մենք մեծ մասամբ ստիպված ենք մեզ միջիթարել հետեւեալ դատողութիւններով թէ եւ իմ ընտրածը բոլորովին տեղեակ է այն գործին, որ յանձն է առնում, բայց նա ազնիւ մարդ է...

Երբեք մենք ընտրանում ենք այն մտքին, որ ամեն մարդ կարող է, եթէ ուզենայ, ամեն տեսակ պաշտօններ վարել, ամեն տեսակ պարագմունքներով զբաղվել, ամեն տեսակ հասարակական գործեր կատարել: Բայց որովհետեւ մեծ մասամբ ոչ միւսը պատրաստ է այն գործին, պարագմունքին կամ պաշտօնին որ յանձն է առել, այդ պատճառով ամեն գործերը մեղանում վատ են գնում և ոչինչ առաջա-

դիմութիւն չէ լինում հասարակական կեանքի մէջ:

Այն առնենք, օրինակի համար, մեր մամուլը: Մի մարդ, որ գիմնադրական ուսումն էլ չէ աւարտել, համալսարանում պատահմամբ քիչ թէ շատ ատուածաբանութիւն կամ պատմութիւն է սովորել, յետոյ պատահմամբ թւարանութեան, կամ աշխարհագրութեան ուսուցիչ է դարձել, այդ մարդը քաղաքական, քաղաքատնտեսական, հասարակական գիտութիւնների ամենատարբերական սկզբունքների հետ ծանօթ էլ չը լինելով, յանկարծ դառնում է պուրիցիստ, քաղաքական թերթի խմբագրապետ և տարիների ընթացքում ծուռ ու սխալ մտքեր յայտնելով, մոլորեցնում է ընթերցողին, յանձն է առնում առաջնորդել ամբողջ, ուղղութիւն տալ հասարակական կարծիքին: Գործներն էլ նոյն տեսակ մարդիկ են. նրանք կամ իրանք ոչինչ պատրաստութիւն չունեն, կամ գոնէ չեն առաջնորդում մի մարդու ձեռքով, որ ինքն չը մտէ պուրիցիստական գիտութեան...

Եւ ահա մեր մամուլն էլ դառնում է մի անճանական գործունէութիւն, նա էլ նման է լինում մեր մնացած հասարակական գործունէութիւնների: Մամուլը մեզանում չէ լինում այսպիսով ճիշդ գիտական սկզբունքների վրա հիմնված մի գործունէութիւն, անկարող է լինում հետազօտել գիտնական հայեացքով մեր հասարակական, բարոյական և տնտեսական բոլոր երևոյթները, չէ ձեռնարկում մի յայտնի, որոշ պրօգրամայով, այլ դառնում է անճանական հաճոյքի, կամայական մտքերի անսանձ արտայայտութիւն: Ենթադրիա, համեմատութեան մէջ եղած օրինակներից օգուտ քաղելը, մարդկութեան ժամանակակից հասարակական կեանքի հետ մեր կեանքի երեւոյթների համեմատելը, այդ բոլորը անհասկանալի, անհասանելի, անմատչելի է հայ խմբագրին և գրողին: Չուրկ ամեն տեսակ գիտութիւնից, զուրկ մասնագիտական պատրաստութիւնից, մեր մամուլը կարծես առանձնացած կտրված է ամբողջ

լուսաւորված աշխարհից, ընդունակ չէ տեսնել, հասկանալ ոչ հասարակութիւնների անցնալիքն էլ նրանց ներկան, և ստեղծում է իր սեփական, խակ, վայրի վերոյ, այլանդակ իդէալները, որոնք հիմնված չը լինելով հաստատ գիտնական հետազօտութեան վրա, այլ անճանական հաճոյքի հետեւանք լինելով, միշտ խախտ, անհաստատ և հակասող են լինում և այսպիսով մոլորեցնում են ժողովուրդը:

Այլընդ պուրիցիստը, չունենալով իր սեփական պրօգրամ, իր սեփական մշակված հաստատ հայեացքները, ենթարկվել է ըսկսում ժողովրդի տգիտութեանն ու մոլեռանդութեանը և փոխանակ ամբողջ առաջնորդելով, ընթանում է նրա նախապաշարմունքների ետեւից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿ ԾՈՒԾՈՒՑ

Սեպտեմբերի 24

Սերող հայ հասարակութեան համակրութիւնը իր արժանաւոր ուղղութիւնով ու պրօգրամայով վաստակած է Վշակի: Նա ուղեց հայ-լուսաւորչականների անաղար կարծիքը և անվայել վարմունքը իրենց այլապաւն եղբայրների վերաբերութեամբ ուղղել: Նա իր կոչմանը համեմատ իրաւացի կերպով մտաւորից այս տարապալման է րելով, ցուց տնտեսական գիտնականներ, որոնք ապագայում կարող են ազդեցութեան տնտեսական և բարոյական յառաջընթացութեանը մեծ խոչընդոտներ հանդիսանալ: Վշակը մասնագիտացաւ, որ իւրաքանչիւր ազգի, կամ իւրաքանչիւր ընտանիքի բարգաւաճումն սահմանափակված է նոյն իսկ ազգի կամ ընտանիքի ընդհանուր անդամների միմեանց հետ համերաշխութեան և միաբանութեան մէջ, որ ինչամական յարաբերութեամբ, առեւտրական զգացմունքով և հարաժափութիւնով ոչինչ բան չի յառաջանայ. սակայն այսպիսի մի իրաւական խօսք, այսպիսի մի օգտակար գաղափարի քարոզելը շատ և շատ վերաւորեց մեր պարբերական հրատարակութիւններից մէկին, այն է պատմական կարծիքները իր ուղիղում ամուր սեղմող Վեղուի: Վեղուի մի խմբագիրը ինքն շատ լաւ գիտէ, և խօսքը այլ մօտ մնայ, բոտ արժանոյն կը գնահատէ Վշակի արտայայտած այդ ազնիւ գաղափարը, բայց որովհետեւ ինքն չի ունեցել նոյն գաղափարը կանխապէս յայտնելու, ուստի նախանձից գրելով տրեւում է չակ տակաւն դարձածներով հայ ամբողջ հասարակութեանը յայտնել թէ Վշակը կրօնախիտութիւն է քարոզում: Մենք զարմանում ենք Վեղուի խմբագրի և իր արանեականների միամտութեան վա: Ինչ են կամեում նրանք յառաջանել այդ տեսակ ցնդաբանութիւններով: Մթթ հաւատացած են թէ ամբողջ մէջ կը դրանվեն իրենց ուղղութեանը ու իրենց անմիտ միտքերին հետեւողներ և հաւանութիւն տուողներ: Եթէ այդպէս են մտածում, կարող են համարձակ առել որ հարաւոր սխալվում են: Ինքնորոշ դատաւարը կարող են թէ Վեղուի յօդուածները և թէ Վշակին: Եւ ճիշդ գաղափար կազմում երկուսի յայտնած մտքերի նպատակների մասին: Իսկ եթէ բացառապէս կը գտնվեն մի քանի անձինք, որոնք հաւանութիւն կը տան առաջնոյն կարծիքներին, այդ մարդիկ կարող են լինել կամ Վշակի երգիւղ թշնամիքը, կամ հնադարեան նախապաշարմունքների խմբով պաճուկված կրեական հոգով տեղ անձինք: Հաւատարմ ենք, որ նոր մտքերի

և արդի լուսաւորութեան ճիշտ տիպարն ունեցող մարդը, իրեն թող չի տայ այն երեխայական կարծիքը յայտնել, թէ հայ ազգի դոյութիւնը պարտաւոր է միմեայն իր եկեղեցուն և իր կրօնին: Նա թաղրենք թէ չենք հայ ազգ դոյութեանը նպատակն իր եկեղեցին է եղել. շատ լաւ, այդ կրօնները, բայց ինչ կը պատասխանէ լրագրի, և թէ հարցնենք, արդեօք ինչ դրութեան մէջ և ինչ պայմաններում էր հայ ազգը նոյն իսկ Բրիտանիայում, մինչդեռ չէթանտ էր, և ինչ վիճակ ստացաւ քրիստոնէութիւնը սովորական ցնեցող յետոյ մինչ այսօր: Ազգութեան վիճակը քրիստոնէութիւնից առաջ ինչ դրութեանում էր, և յետոյ վիճակ ունեցաւ: Վեղուի պ. խմբագիրը կրօնագիտութեան մէջ իրեն անհամեմատ գերազանց համարում և ծայրայեղութեան այն աստիճանին հասնում, որ մինչև անգամ այս առարկայի մասին Վշակի խմբագրի հետ պոյեմիկ շարունակելը շատ ստոր է համարում: Թող այդ այդպէս լինի, բայց և թող մի քիչ էլ ազգային պատմութիւն ուսումնասիրէ, և անցեալը ներկայի հետ բաղդ տեսլով, անհաւա պատասխան տայ: Ներքեզ թ թերցող, որ ես բուն հարցից քիչ չեղկեցայ:

Վեղուի գործերը մինչ այսօր լրագրաւ այս վերմ վիճարանութեան մասին հրատարակելու յօդուածներից խնդրել պարզեւուն ոչ մի նպատակ չը գտնելով ամբողջ հայ ազգի կողմ հորդորում են դիմացում, որով կարելի լինի րաւելին, վստահանում են ազգի կողմից պատասխանել: Լոկ կրօնական ունայն վիճարով երկպառ կութեան սերմեր ցանել մի ազգի տարբեր դասերի միմեանց պատկանող անդամների մէջ, ամբողջով թէ այսօր երբ մէկը լուսաւորչական եկեղեցում Սատուուն չէ աղօ րում, հետեւալիս նա կոչվի ու իրաւունք չը պիտի ունենայ, և եկեղեցի պէտք է չլաճէ նրան, իսկով ոչ թէ ազգայնաւորչականութեանը նպատակը կը լինենք, այլ մի թիւղեկան պաշտօնեայ կը հանդիսանանք, իսկ տրեւում են հայի սրտի զգացմունքն չենք կոկորդունի ինչդի: Մենք մեր տունը մեր ձեռքով կը քանդենք, եթէ այսպիսի կրօնական վերաբերումներ մեր գրացուն մեզ վրա այն գաղափար կազմել, թէ մենք մի կրօնական աղաներ, և ոչ թէ մի ամբողջ ազգութիւն: Վեղու շատ մեծացու մեղք է գործում այսպիսի պատճառ քարոզել կարգալով: Թող նա խելոյ, որ հայ հասարակութեան մեծամասնութիւնը հասկացողութիւն ունի, գիտէ թէ որի դոյութիւն է ժամանակակից կեանքի պահանջ. և չակինք թէ Վեղուին և եթէ չէ ցանկանա որ իր համարները այնպէս կազմակերպի յետոյ առանց բաժանորդներից, թող դատարկեցէ այդպիսի ընթացքը: Բաւական է ինչքան գիտաւ տուց: Ան թող ցանկանայ Վշակին երկեանք, որովհետեւ առաջ վերջնոյս դոյութեան իր հրատարակութիւնը կը գաղափար, զրկված լով նւթից:

Մի քանի խօսք ես Եռու մասին: Բնութիւն հրաշագործ ձեռքը չէ դաշնել իր գեղեցիկ հրաշքերը տեսնել: Ղարաբաղում և առաւել վարժատրել է Եռուին: Կիման բարեխառն և խորթի է, Լուրը անուշ, հողը պարարտ և թիւ Բնութեան այս շուայ վարժատրութեան շնորհաբաղի բնակիչները լինում են շատ աշխատունակ, առողջակալք և բնդունակ: Բնութեանը զարգացումը, բնութեան այս բոլոր գաղափարները անհեղձ առաջ ծնվող և կեանքը յոյներից. ոչ մի աչքի չի կողո իր տարաւոր մասեր Եռուին ազգային ուսումնասիրող չէ շնորհալի, չը նշելով որ տարեկան այնքան աշխատար այնտեղ ծախսվում է ազգի գրգռման տարով երկոյթի պատճառը կարելի է որ անմիաբանութեան և ետեւանութեան մէջ: Երբեք միւսն քանդել և երկրորդի բարի տակը երրորդը խանդարել, այն է եղել մի շնորհիւների նպատակը: Սակայն ուսումնասիրել վերջում և կեանքի դանդաղ պայմաններ ծանծա հոգաբարձուպ ձեռքում: Չը նայելով այս վերջիններին գովել գործունէութեանը անիրաւացի կերպով քար ձգողներ կան մեր յայ անցեալից դատարարակաւ ներկան, որ խաբար պապայ է խոտտանում, որովհետեւ ուսուցչական և թէ հոգաբարձական խմբերը գրեթէ անգիտութեամբ անճանախաբ գործում են դոտ ուսումնասիրել բարեխառնութեան: Յանկան եւ յաջողութիւն իրենց գործունէութեանը լով որ պապան յոյս չի տայ մեր ախալված ներք մեր կարծիքների մէջ:

Գ. Տէր-Սարտիբոյսեան

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԷ

